

1.2.4. Տրանսպորտ

**Բեռնափոխադրումներ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 4507.0 հազ.տոննա, որը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ նվազել է 5.2<sup>1</sup> տոկոսով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 2309.6 մլն. տոննա-կմ և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 14.0<sup>1</sup> տոկոսով:

**2000թ. հունվար-դեկտեմբերին, բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով**

	2000թ.հունվար-դեկտեմբեր	2000թ. հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, տոկոսներով	2000թ դեկտեմբեր	2000թ. դեկտեմբերը 2000թ. նոյեմբերի նկատմամբ, տոկոսներով
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա</b>	4507.0	94.8 <sup>1</sup>	445.0	102.2
<i>այդ թվում՝</i>				
<b>Երկաթուղային տրանսպորտով</b>	1423.2	102.4	139.9	72.9
արտահանվել են բեռներ	190.0	107.5	18.4	77.6
ներկրվել են բեռներ	899.6	111.7	91.8	72.1
ներհանրապետական փոխադրումներ	333.6	81.8	29.7	72.8
<b>ավտոտրանսպորտով</b>	2076.3	83.3 <sup>1</sup>	195.7	89.4
<i>որից՝</i>				
արտահանվել են բեռներ	59.7	67.1	1.4	6.8
ներկրվել են բեռներ	241.3	97.5	15.0	94.4
ներհանրապետական փոխադրումներ	1775.3	82.3	179.3	109.0
<b>օդային տրանսպորտով</b>	13.8	102.2	1.9	172.7
<i>որից՝</i>				
արտահանվել են բեռներ	6.0	125.0	0.8	200.0
ներկրվել են բեռներ	7.8	89.7	1.1	157.1
<b>խողովակաշարային տրանսպորտով</b>	993.7	115.7	107.5	146.3

**Երկաթուղային տրանսպորտ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 2.4 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 63.2 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 57.9 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 13.4 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 12.8 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 23.4 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 29.3 տոկոսի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվար-դեկտեմբերին 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ հացահատիկի և աղացվող մթերքի փոխադրման ծավալն

<sup>1</sup> Տեմպերը հաշվարկված են «ՀՀ բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի» ընտրամրային հետազոտության արդյունքներով՝ 1999թ. ավտոմոբիլային տրանսպորտի (որպես բազային) ցուցանիշի ճշգրտման հիման վրա:

ավելացել է 76.4 տոկոսով, քարածխինը՝ 44.0, սև մետաղներիցը՝ 20.5, իսկ անտառային բեռների (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլ) փոխադրման ծավալը նվազել է 58.3 տոկոսով, սև մետաղների ջարդոնինը՝ 37.0, ցեմենտինը՝ 31.2, նավթ և նավթամթերքներիցը՝ 27.4, քիմիական ու հանքային պարարտանյութերինը՝ 12.2 և հանքային շինարարական նյութերինը՝ 8.6 տոկոսով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 31.6 տոկոս, 1999թ. հունվար-դեկտեմբերի 29.2 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-դեկտեմբերին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 9.4 տոկոսով, կազմելով 353.6 մլն. տոննա-կմ: 2000թ. հունվար-դեկտեմբերին վազոնների միջին օրական բեռնաթափումը նվազել է 3 միավորով և կազմել 51 վազոն՝ 1999թ. հունվար-դեկտեմբերի 54 վազոնի դիմաց, իսկ բեռնումը նվազել է 4 միավորով և կազմել 24 վազոն: Նույն ժամանակաշրջանում 1.1 օրով արագացել է վազոնապտույտը:

**Ավտոմոբիլային տրանսպորտ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 2076.3 հազ.տոննա (1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 16.7<sup>1</sup> տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 11.6 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 9.9 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով՝ 14.0 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 20.8 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.9 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 3.6 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով՝ 15.2 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 18.4 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 85.5 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 86.5 տոկոսի դիմաց):

2000 թ. հունվար-դեկտեմբերին բեռնաշրջանառությունը կազմել է 40.0 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի համեմատ նվազել է 6.3<sup>1</sup> տոկոսով: 2000թ. հունվար-դեկտեմբերին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 46.1 տոկոս՝ 1999թ. հունվար-դեկտեմբերին 52.4 տոկոսի դիմաց:

**Օդային տրանսպորտ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 13.8 հազ. տոննա (1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 2.2 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 56.5 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 64.4 տոկոսի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 43.5 տոկոս (1999 թ. հունվար-դեկտեմբերի 35.6 տոկոսի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 9.6 մլն. տոննա-կմ և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 24.4 տոկոսով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 տոկոս և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Օդային տրանսպորտով փոխադրված բեռների 30.4 տոկոսը (4.2 հազ.տոննա) տեղափոխվել է հայաստանյան շարժակազմով (1999թ. հունվար-դեկտեմբերի 39.3 տոկոսի կամ 5.3 հազ. տոննա բեռի դիմաց), որից 0.8 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված բեռնափոխադրումները՝ 1999թ. հունվար-դեկտեմբերի 3.8 տոկոսի դիմաց:

<sup>1</sup> Տե՛ս նաև հաշվարկված են «ՀՀ բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի» ընտրամքային հետազոտության արդյունքներով՝ 1999թ. ավտոմոբիլային տրանսպորտի (որպես բազային) ցուցանիշի ճշգրտման հիման վրա:


**Օդային տրանսպորտով բեռնափոխադրումները**

	2000 թ. հունվար-դեկտեմբեր	2000թ. հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, տոկոսներով	2000թ. դեկտեմբեր	2000թ դեկտեմբերը 2000թ. նոյեմբերի նկատմամբ, տոկոսներով
Փոխադրվել են բեռներ*, հազ. տոննա	13.8	102.2	1.9	172.7
<i>այդ թվում՝</i>				
հայաստանյան շարժակազմով	4.2	79.2	0.4	133.3
Բեռնաշրջանառություն*, մլն. տ/կմ	9.6	75.6	1.0	90.9

2000թ. հունվար-դեկտեմբերին 1999թ. հունվար-դեկտեմբերի համեմատ օդային կանոնավոր բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ԱՊՀ երկրների բեռնափոխադրումների ծավալը կազմել է 43.9 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի 58.8 տոկոսի դիմաց), իսկ միջազգային բեռնափոխադրումների ծավալը կազմել է 56.1 տոկոս 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի 41.2 տոկոսի դիմաց:

**խողովակաշարային տրանսպորտ.** 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ բեռնամաքային հայտարարագրերի, խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներմուծվել 993.7 հազ. տոննա բնական գազ և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի համեմատ աճել 15.7 տոկոսով, իսկ բեռնաշրջանառությունը՝ 15.7 տոկոսով և կազմել 1906.4 մլն տոննա-կմ: 2000թ. հունվար-դեկտեմբերին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 22.0 տոկոս 1999թ. հունվար-դեկտեմբերի 18.1 տոկոսի դիմաց:

**2000թ. հունվար-դեկտեմբերին բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին միջոցների (տոկոսներով)**



\* Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները **Ուղևորափոխադրումներ.** 2000թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի

ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 132500.6 հազ.մարդ, որը 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 1.0<sup>1</sup> տոկոսով: 2000թ. հունվար-դեկտեմբերին ուղևորաշրջանառությունը կազմել է 2062.6 մլն. ուղևոր-կմ և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 2.4<sup>1</sup> տոկոսով:

**2000թ. հունվար-դեկտեմբերին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2000թ. հունվար-դեկտեմբեր	2000թ. հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (տոկոսներով)	2000թ. դեկտեմբեր	2000թ. դեկտեմբերը 2000թ. նոյեմբերի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	132500.6	99.0 <sup>1</sup>	12420.8	117.0
<i>այդ թվում՝</i>				
երկաթուղային տրանսպորտով	1086.6	82.2	83.2	83.5
ավտոտրանսպորտով	100378.8	102.7 <sup>1</sup>	9563.5	123.6
օդային տրանսպորտով	611.1	97.0	67.3	137.1
էլեկտրատրանսպորտով	30424.1	89.3	2706.8	99.2

2000թ. հունվար-դեկտեմբերին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.8 տոկոս, 1999թ. 1.0 տոկոսի դիմաց, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 75.7 տոկոս, 1999թ. 73.1 տոկոսի դիմաց, օդային տրանսպորտինը՝ 0.5 տոկոս, 1999թ. նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ և էլեկտրատրանսպորտինը՝ 23.0 տոկոս, 1999թ. 25.4 տոկոսի դիմաց:

**Երկաթուղային տրանսպորտ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 1999 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ նվազել է 17.8 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 46.8 մլն. ուղևոր-կմ, որը 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 0.9 տոկոսով:

**Ավտոմոբիլային տրանսպորտ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին, ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ավելացել է 2.7<sup>1</sup> տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 1310.0 մլն. ուղևոր-կմ, որը 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 2.5 տոկոսով:

**Օդային տրանսպորտ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ օդային փոխադրումների իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 611.1 հազ. ուղևոր, որի 49.5 տոկոսը (302.3 հազ. ուղևոր) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը:


<sup>1</sup> Տե՛ս նաև հաշվարկված են «ՀՀ բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի» ընտրամքային հետազոտության արդյունքներով՝ 1999թ. ավտոմոբիլային տրանսպորտի (որպես բազային) ցուցանիշի ճշգրտման հիման վրա:

**Օդային տրանսպորտով ուղևորափոխադրումները**

	2000թ. հունվար-դեկտեմբեր	2000թ. հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (տոկոսներով)	2000թ. դեկտեմբեր	2000թ. դեկտեմբերը 2000թ. նոյեմբերի նկատմամբ, տոկոսներով
Փոխադրվել են ուղևորներ*, հազ. ուղևոր	611.1	97.0	67.3	137.1
<i>այդ թվում՝</i>				
<i>հայաստանյան շարժակազմով</i>	302.3	87.1	34.1	131.7
Ուղևորաշրջանառություն* հազ. ուղ.կմ	579.2	89.6	62.9	125.5

Հայաստանյան շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 1.4 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները, 1999թ. հունվար-դեկտեմբերի 1.1 տոկոսի դիմաց: Չարտերային չվերթների 72.1 տոկոսը բաժին է ընկել միջազգային հաղորդակցության թռիչքներին (մնացածը՝ ԱՊՀ երկրներ) 1999թ. հունվար-դեկտեմբերի 74.5 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-դեկտեմբերին կանոնավոր չվերթներով կատարված ուղևորափոխադրումների ծավալում ԱՊՀ երկրների հետ ուղևորափոխադրումների բաժինը կազմել է 80.8 տոկոս, իսկ այլ երկրների հետ՝ 19.2 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերին, համապատասխանաբար՝ 64.4 և 35.6 տոկոս):

**2000 թ. . հունվար-դեկտեմբերին կանոնավոր չվերթներով ուղևորափոխադրումների ծավալն ըստ հաղորդակցության տեսակների (տոկոսներով)**



- *Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները*

2000թ. հունվար-դեկտեմբերին օդային տրանսպորտով փաստացի կատարված չվերթների քանակը չվացուցակով նախատեսված չվերթների քանակի նկատմամբ գերազանցել է 14.0 տոկոսով կազմելով 5506 թռիչք, (1999թ. հունվար-դեկտեմբերին՝ համապատասխանաբար՝ 20.9 տոկոս կամ 5666 թռիչք): Ընդ որում, ԱՊՀ երկրների հետ հաղորդակցությամբ կատարվել է 4293 թռիչք, այլ երկրների հետ հաղորդակցությամբ՝ 1213 թռիչք:

Փաստացի կատարված չվերթների 26.3 տոկոսը կատարվել է ուշացումով, որից՝ 15.3 տոկոսը անբարենպաստ եղանակի, իսկ մնացածը՝ այլ պատճառներով:

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 579.2 մլն. ուղևոր-կմ և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 10.4 տոկոսով:

**Էլեկտրատրանսպորտ:** 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների քանակը կազմել է 30424.1 հազ. ուղևոր և 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ նվազել 10.7 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 196.6 մլն. ուղևոր-կմ և 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 11.3 տոկոսով:

**2000թ. հունվար-դեկտեմբերին ուղևորների փոխադրումների ցուցանիշն, ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների**

	2000թ. հունվար-դեկտեմբեր	2000թ. հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (տոկոսներով)	2000թ. դեկտեմբերը 2000թ. նոյեմբերի նկատմամբ, տոկոսներով
Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, ընդամենը, հազ. մարդ	30424.1	89.3	2706.8
այդ թվում՝			
մետրոպոլիտենով	15476.7	91.6	1366.3
տրամվայով	5200.1	86.5	509.7
տրոլեյբուսով	9359.9	86.3	795.8
ճոպանուղով	387.4	128.0	35.0

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 50.9 տոկոս, իսկ տրոլեյբուսով՝ 30.8, տրամվայով՝ 17.1 և ճոպանուղով՝ 1.2 տոկոս:

**Տրանսպորտային պատահարներ.** Հանրապետությունում 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարների 937 դեպք, որը 1999թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 9.1 տոկոսով: Պատահարներից զոհվել է 214 և վիրավորվել 1163 մարդ՝ 1999թ. նույն ժամանակաշրջանի 229 և 1272 մարդու դիմաց:

2001թ. հունվարի 1-ի դրությամբ 937 ճանապարհատրանսպորտային պատահարներից չեն բացահայտվել 100-ը, որոնց հետևանքով զոհվել են 19 և վիրավորվել 86 մարդ:

2000թ. հունվար-դեկտեմբերին գրանցված 937 ճանապարհատրանսպորտային պատահարներից 58.9 տոկոսը կատարվել է քաղաքային և գյուղական բնակավայրերում (զոհվել են 74 և վիրավորվել 573 մարդ), 38.9 տոկոսը՝ ավտոմոբիլային ճանապարհներին (զոհվել են 128 և վիրավորվել 567), 2.2 տոկոսը՝ այլ տեղերում (զոհվել են 12 և վիրավորվել 23):